

## ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

### ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱՀԵՐԻ ԵՒ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԶԵՌՔ ԲԵՐԱԾ ՇԱՀԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իրանական տիրապետության շրջանում հայ ժողովրդի գոյատևման համար կարեւոր նշանակություն ունեին Հայոց կաթողիկոսների կողմից իրանական իշխանությունների հետ դրական հարաբերությունների ապահովումը եւ իրանահպատակ հայության ու հայ եկեղեցու կենսական շահերի պաշտպանությունը շահական հրովարտակներով: Ուստի հայոց կաթողիկոսների գործունեության գնահատման հարցում խիստ անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ նրանց ձեռք բերած իրավական փաստաթղթերն ու հրովարտակները: Այս առումով գիտական մեծ արժեք են ներկայացնում Մատենադարանում պահպանված պարսկալեզու վավերագրերը, որոնցից սույն հոդվածի շրջանակներում կդիտարկվեն Ղազար Զահկեցի կաթողիկոսի ձեռք բերած հրովարտակները՝ գնահատելու համար նրա գործունեության որոշ առանձնահատկություններ:

Երեւանի Մատենադարանում պահպանվել են Տ. Ղազար Ա Զահկեցի (1737–1751 թթ.) Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով ձեռք բերված 19 հրովարտակ, որոնցից 11-ը հրապարակվել են 1740–1743 թթ. Նադիր շահի եւ նրա որդի ու Իրանի փոխարքա Ռեզա Ղուլի Միրզայի կողմից, իսկ 8-ը՝ Իբրահիմ շահի կողմից 1748–1749 թթ.: Այս հրովարտակներն ի հայտ են բերում կաթողիկոսի ջանքերը հայ եկեղեցու ու հայ ժողովրդի իրավունքներն ու շահերը հարեւան քոչվոր բնակիչների, պետական պաշտոնյաների եւ մահմեդական հոգեւորականների, նաեւ կաթոլիկ քարոզիչների ոտնձգություններից պաշտպանելու ուղղությամբ:

Ըստ ժամանակագրական կարգի Ղազար կաթողիկոսի կողմից ձեռք բերված ու պահպանված պարսկալեզու հրովարտակներից առաջին երեքը հրապարակված են 1740 թ. հունվարին, այն ժամանակահատվածում (1738 թ. նոյեմբերի – 1740 թ. ապրիլ), երբ Նադիր շահը իրականացնում էր իր ռազմական արշավանքը դեպի Հնդկաստան, իսկ Իրանը կառավարում էր նրա որդի Ռեզա Ղուլի Միրզան, որը նշանակվել էր փոխարքա: Ուստի պատահական չէ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռք բերած հիշյալ հրովարտակները հրապարակված են Ռեզա Ղուլի Միրզայի անունից: Այս հրովարտակներն առանձնանում են նրանով, որ յուրաքանչյուրում շոշափվում են մի քանի խնդիրներ, եւ դրանց

վերաբերյալ կարգադրություններ են արվում, այն դեպքում, երբ այդ հարցերից ամեն մեկի առնչությամբ սովորաբար հրապարակվում էր առանձին հրովարտակ:

Այս հրովարտակներից մեկը<sup>1</sup>, ինչպես եւ XVII դարում Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի ջանքերով ձեռք բերված մի շարք այլ հրովարտակներ<sup>2</sup>, հենվելով նախորդ շահերի հրովարտակների ու մահմեդական բարձր հոգեւորականների կայացրած վճիռների վրա, արգելում է խոչընդոտել հայերին իրենց եկեղեցիների վերանորոգման ու նորերը կառուցելու, եկեղեցական զանգերը հնչեցնելու ու ծիսական արարողությունները անցկացնելու հարցում:

Երկրորդ հրովարտակով<sup>3</sup> արգելվում են հետ պահանջել Երեւանի նահանգից արտագաղթած քոչվոր ցեղերի կողմից հայերի մոտ թողնված գույքը, որ զավթել էին թուրքական զորքերը, նաեւ՝ իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքի նկատմամբ նոր մահմեդականացած հայերի հավակնությունները: Երեւանի նահանգից հիշյալ քոչվոր ցեղերը գաղթեցվել էին 1730-1731 թթ. շահ Քահանաս II-ի կողմից: Ինչպես նշվում է հրովարտակին կցված խնդրագրի տեքստում. «Օսմանցիների օրոք հանգուցյալ Քահանաս Միրզան մտավ Երեւան եւ այնտեղի բոլոր ցեղերին գաղթեցրեց Իրաքի կողմերը: Յեղերի մարդկանցից յուրաքանչյուրն իր ունեցվածքն ու գույքը ժամանակավորապես թողեց գյուղերում հայերի տներում: Օսմանցիները այդ ամենը պարտադիր կերպով բոլոր տեղերից հավաքեցին ու զավթեցին՝ տանտերերին նույնպես վնաս հասցնելով»: Հետագայում այդ ցեղերի անդամները վերադառնալով սկսում են ետ պահանջել իրենց ունեցվածքը, որը բնականաբար մեծ նեղություն էր պատճառում այն հայերին, որոնց պահպանությանն էր հանձնվել այն, բայց խլվել հետագայում Երեւանի նահանգը իրենց ենթարկած թուրքական իշխանությունների կողմից: Այս խնդրի շուրջ Նադիր շահից հրովարտակ էր ձեռք բերել նաեւ նախորդ կաթողիկոս Աբրահամ Կրետացին 1735 թ., որը սակայն չի պահպանվել<sup>4</sup>: Հաջորդ հարցը, որ բարձրացվում է այդ հրովարտակում, վերաբերում է իրենց քրիստոնյա ազգականների ժառանգության նկատմամբ նոր մահմեդականացած հայերի, այսպես կոչված ջադիդ-ուլ-խալամների, հավակնությունների արգելմանը. մի հարց, որի դրական լուծումը խիստ կարեւոր էր իրանահպատակ հայության համար: Շիա մահմեդականների մոտ Սեֆյան ժամանակաշրջանում լայն կիրառություն ունեւր այսպես կոչված Իմամ

<sup>1</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 367:

<sup>2</sup> Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, Երեւան, 2005, վավերագրեր 28, 31, 33, 34:

<sup>3</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 483:

<sup>4</sup> Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, Երեւան, 1973, էջ 52:

Զահֆարի օրենքը, ըստ որի զիմմի<sup>5</sup> ռայաթների<sup>6</sup> մահմեդականացած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքը ամբողջովին գրավելու եւ նրանց զրկելու ժառանգությունից: Այս առթիվ բազմաթիվ բողոքագրերի եւ դատական պրոցեսների ստվար գործեր կան պահպանված<sup>7</sup>: Հիշյալ օրենքի կիրառությունը մեծ նեղություն էր պատճառում իրանահպատակ հայությունը՝ նպաստելով նրանց մահմեդականացմանն ու թոշյ տալով անգամ ազգական չհանդիսացող մահմեդականացած անձանց հավակնություններ ունենալ մահացած քրիստոնյայի ունեցվածքի նկատմամբ<sup>8</sup> կամ էլ օտարման ոչ ենթակա վակֆային կալվածքները փորձել հափշտակել Մայր Աթոռ Ս. Էջմիածնից<sup>9</sup>: Սեֆյան պետության անկման շրջանում հայոց կաթողիկոսներ Աստվածատուր Ա. Համադանցուն եւ Աբրահամ Բ. հռոմեացուն հաջողվում է Իրանի շահ Թահմասպ Բ-ից, որի իշխանությունը ավելի շատ ձեւական բնույթ էր կրում, այս հարցի վերաբերյալ ձեռք բերել հայերի համար նպաստավոր բովանդակություն ունեցող հրովարտականեր: Մասնավորապես, շահ Թահմասպ Բ-ի 1724թ. հրամանագրով մի շարք դատական ու վարչական ատյաններում իրենց իրավունքները հաստատելուց հետո միայն նոր մահմեդականացած հայերին իրավունք էր տրվում հավակնել իրենց ազգականների ունեցվածքին<sup>10</sup>: Այս հրովարտակը գործադրվելու դեպքում, փաստորեն, որոշ չափով պետք է դժվարացներ մահմեդականացած հայերի համար իրենց հեռավոր եւ մոտ ազգականների ունեցվածքին տեղ դառնալը: Նույն գահակալի 1731 թ. հրովարտակը<sup>11</sup> հրահանգում է Չուխուր Սաադի (Երեւանի նահանգի) կառավարչին (չնայած, որ այդ նահանգը դեռեւս գտնվում էր Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ) արգելել նոր մահմեդականացած հայերին ժառանգության վեճ սկսել իրենց հարազատների հետ: Այս հրովարտակը փաստորեն բոլորովին արգելում է Իմամ Զահֆարի օրենքի կիրառությունը հայերի ժառանգական խնդիրներում: Այսպիսով, ամենայն հավանականությամբ, հենվելով վերը նշված հրովարտակաների վրա, Ղազար կաթողիկոսին հաջողվում է այս

<sup>5</sup> Զիմմի - այդպես էին կոչվում քրիստոնյա եւ հրեա հպատակները, որոնք ի տարբերություն մուսուլման հպատակների, բոլոր հարկերից ու պարտավորություններից բացի, պարտավոր էին վճարել նաեւ հատուկ գլխահարկ՝ «ջիզյա», որով իրավունք էին ստանում իրենց կրոնը դավանելու:

<sup>6</sup> Ռայաթ – սկզբնաղբյուրներում գործածվում է հպատակ եւ հարկատու ժողովրդի, հատկապես նստակյաց, հողագործ գյուղացիության իմաստով:

<sup>7</sup> Հ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական ֆաղափականության հարցի շուրջը. – «Բանբեր Մատենադարանի», 1956, հ. 3, էջ 87-88:

<sup>8</sup> Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ III, Երեւան, 2005, վավ. 18:

<sup>9</sup> Նույն տեղում, վավ. 51:

<sup>10</sup> Նույն տեղում, վավ. 86:

<sup>11</sup> Նույն տեղում, վավ. 89:

հարցի առնչությամբ հայերի համար նպաստավոր կարգադրությունն ստանալ Իրանի փոխարքայից, ըստ որի. «Եթե հայերից որեւէ մեկը արժանանում է իսլամն ընդունելու պատվին, ապա այդ մահմեդականացածներից ոչ ոք չպետք է իր ազգականների հետ ժառանգության վեճ սկսի եւ հրամանին ու կարգին հակառակ անօրինականություն գործի»: Կարեւոր համարելով նշված խնդրի լուծումը հայ ժողովրդի համար՝ Ղազար կաթողիկոսը նույն բովանդակությամբ հրովարտակ է ձեռք բերում նաեւ Իբրահիմ շահից 1748 թ.<sup>12</sup>:

Ռեզա Ղուլի Միրզայի երրորդ հրովարտակով<sup>13</sup> արգելվում է հայ եկեղեցու նվիրակներից ճանապարհները հսկող պահակային ծառայությունների կողմից հարկերի գանձումը, մի խնդիր, որին հայոց կաթողիկոսների խնդրանքով անդրադարձել են ինչպես նախորդ Սեֆյան շահերը, այնպես էլ ինքը՝ Նահիրը՝ թույլ տալով հայ եկեղեցու ներկայացուցիչների ազատ շրջագայությունը նրանց ենթակա տարածքներում<sup>14</sup>: Այս խնդրի կապակցությամբ Ղազար կաթողիկոսը համանման բովանդակությամբ հրովարտակ է ձեռք բերել նաեւ Իբրահիմ շահից 1748 թ.<sup>15</sup>:

Ուշագրություն են արժանի այս հրովարտակի մյուս երկու մասերը, որոնցում հրահանգվում է երեւանի նահանգ մտնող բարձրաստիճան պաշտոնյաներին փիշքաշի<sup>16</sup> գանձման հարցում չարաշահումներ թույլ չտալ եւ կաթողիկոսից ապօրինաբար ձի ու այլ կենդանիներ չպահանջել: Ինչպես երեւում է, Ղազար կաթողիկոսը հրաժարվում էր հավելյալ նվերներով սիրաշահել պարսից իշխանավորներին, ինչը բավական էր, որպեսզի վերջիններս վատ տրամադրվեին նրա ու հայ եկեղեցու հանդեպ: Եվ զարմանալի չէ, որ այս շրջանում Չամչյանի վկայությամբ թշնամություն է ընկնում նրա եւ պարսից բարձրաստիճան իշխանավորների՝ «Շահմահմուտի», այնուհետեւ նաեւ Աստապատի «Ֆեթալի նախարարի» միջեւ: Այս պատճառով Մայր Աթոռը հարկադրված է լինում ծանր տուգանքներ վճարել<sup>17</sup>: Ամենայն հավանականությամբ հենց այս Ֆաթհալի խանի կնիքն է դրոշմված 1744 թ. դեկտեմբեր ամսին կազմված մի փաստաթղթի վրա, որն իրենից ներկայացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալ-

<sup>12</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 396:

<sup>13</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 482:

<sup>14</sup> **Հ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ II, վավ. 27, էջ 117–118: Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, Երևան, 2005, վավերագրեր 9,

<sup>15</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 402:

<sup>16</sup> Փիշաղ - զանազան առիթներով բնակչության կողմից ֆեոդալին կամ պետական պաշտոնյաներին նվերների անվան տակ հատուցվող տուրք, ինչպես նաեւ ստորադաս պաշտոնյաների կողմից իրենց վերադասին, կամ խոշոր ֆեոդալների կողմից՝ շահին մատուցվող նվեր:

<sup>17</sup> **Մ. Զամչյան**, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 821:

վաճքներից գանձվող հարկերի մի մանրամասն հաշվարկ, որի համաձայն վանքը պարտավոր էր վճարել նրան հատկացված մուաֆության<sup>18</sup> շափաբաժինը գերազանցող 212.200 դինարի<sup>19</sup> գումարը<sup>20</sup>: Փաստաթղթի հակառակ կողմում արձանագրվում է կաթողիկոսի կողմից այդ գումարի վճարված լինելու փաստը: Դեռեւս 1735 թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսի խնդրագրի համաձայն անց էր կացվել Մայր Աթոռի կալվածքներից գանձվող հարկերի մանրամասն հաշվարկ, որի վերջնական գումարի՝ 106.910 դինարի շափով հաստատվել էր նրա մուաֆության իրավունքը: Կաթողիկոսը միայն Երեւանի նահանգի 19 վանքերի համար ամեն տարի պետք է 175.000 դինար վճարեր շահին<sup>21</sup>: Վերը նշված 212.200 դինարի գանձումը 19 վանքերի համար վճարվող ամենամյա 175.000 դինարի հետ կազմում էր բավականին մեծ հարկաբաժին եւ թերեւս մեկն էր Մայր Աթոռից գանձված ծանր տուգանքներից:

Ծագումով լինելով Նախիջևանի Զահուկ գավառից, ուր հայ ունիթորների կենտրոնն էր՝ Ղազար Զահեկեցի կաթողիկոսը լավատեղյակ էր հայերի դավանափոխության ու կաթողիկական քարոզչության կործանարար հետեւանքներին, ուստի եւ «անզիշում դիրքորոշում» ուներ կաթողիկ քարոզիչների եւ քարոզչության հանդեպ, որը դրսևորվել է ինչպես նրա գրչին պատկանող կրոնական գործերում ու քարոզներում, այնպես էլ նրան ձեռք բերած հրովարտակներում<sup>22</sup>: Կարմեյան միաբան Ֆիլիպ Մերիի վկայությամբ, իրենք 1739-1740 թթ. ենթարկվում էին հալածանքների «ոչ կաթողիկ պատրիարք Ղազարի կողմից, որը պահանջում էր, որ բոլոր քարոզիչները Իրանից դուրս քշվեն, եկեղեցիները կործանվեն»: Կաթողիկոսը հինգ անգամ այս հարցով դիմում է փոխարքա Ռեզա Ղուլի Միրզային, մեծ գումարներ ծախսում, որի արդյունքում շատ կաթողիկներ բանտ են նետվում եւ շահական հրովարտակ է ձեռք բերվում<sup>23</sup>: Թեեւ Ռեզա Ղուլի Միրզայից ձեռք բերված այս հրովարտակը Մատենադարանի արխիվում չկա, սակայն կան կաթողիկոսի ջանքերով Նազիր շահից ձեռք բերված 1741 թ. երկու հրովարտակ<sup>24</sup>. ուղղված կաթողիկ միսիոներների քարոզչության դեմ: Այդ հրովարտակներին կցված խնդրագրերում Ղազար կաթողի-

<sup>18</sup> Մուաֆություն - հարկերից ազատված լինելը, հարկային իմունիտետ վայելը. գործածվում է ինչպես անհատների, այնպես նաև օբյեկտների վերաբերյալ:

<sup>19</sup> Դինար – արծաթ դրամի միավոր: Խոշոր դրամական հաշվումները կատարվում էին «թումանով», որը հավասար էր 10.000 դինարի:

<sup>20</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 392:

<sup>21</sup> Նույն տեղում, վավ. 354:

<sup>22</sup> Ա. Այվազյան, Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման փառալիններում, Երեւան, 2003, էջ 141- 143:

<sup>23</sup> A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, v. I, London, 1939, pp. 632-633.

<sup>24</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագրեր 375ա, 380:

կոսը կաթոլիկ քարոզիչներին մեղադրում է ոչ միայն «հայերին մոլորեցնելու եւ նենգորեն կաթոլիկացնելու», այլեւ «լրտեսութեամբ զբաղվելու» եւ երկրին վերաբերող «անհրաժեշտ տեղեկութիւնները իրենց միապետներին հասցնելու» մեջ՝ այն համարելով «պետական դավաճանութիւն»։ Այս պատճառով կաթոլիկ քարոզիչները մեծ գումարներ են ծախսում ու «իրենց բարեկամների» միջնորդութեամբ հրովարտակ են ձեռք բերում, որպէսզի նորից ազատորեն գործեն<sup>25</sup>։ Նադիր շահը այնուհետեւ հաստատում է քարոզիչների նախկինում ունեցած արտոնութիւնները։ Կարմելյան միաբանների վկայութեամբ՝ Ղազար կաթողիկոսի գահընկեց արվելը եւս կապված է կաթոլիկ քարոզիչներին վարկաբեկելու նրա փորձի հետ<sup>26</sup>։

Թեեւ տարբեր են ժամանակակիցների մեկնաբանութիւնները Ղազար կաթողիկոսի գահընկեց արվելու պատճառների, սակայն բոլոր աղբյուրները միանշանակ պնդում են նրա օրոք Մայր Աթոռի կողմից պարսից արքունիքին մի քանի անգամ վճարված ծանր տուգանքների մասին<sup>27</sup>։

Այստեղ շահի անձնական վերաբերմունքը կաթողիկոսի նկատմամբ կարծում ենք խաղում էր երկրորդական դեր, նախ, որ ընդհանրապէս Նադիր շահի իշխանութիւն տարիներին ժողովրդից գանձվող ծանր հարկերն ու տուգանքները հաճախակի էին. այդ էին պահանջում շահի կողմից իրականացվող բազմաթիվ ռազմական ձեռնարկումները<sup>28</sup>, երկրորդ, որ Նադիրն արդեն չունէր Հայոց կաթողիկոսին սիրաշահելով նրա հպատակների օժանդակութիւնը ստանալու կարիքը, որը նա զգում էր Օսմանյան պետութիւնից հայկական տարածքները վերադարձնելու ժամանակահատվածում։

Ղազար կաթողիկոսին չի հաջողվում պահպանել բոլոր այն 7 գյուղերի (Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրաշլի, Դիբաբլու եւ Հաւաբիբենդ) պատկանելութիւնը Մայր Աթոռին, որոնց նկատմամբ սեփականութեան իրավունքը ամրագրել էր Աբրահամ Կրետացի կաթողիկոսը 1735 թ. Նադիր շահի հրովարտակով<sup>29</sup>։

Արդեն 1741 թ. հրապարակված հրովարտակներում խոսքը Երեւանի նահանգի Վաղարշապատ, Օշական, Ֆրանկանոց ու Մաստարա գյուղերի մասին

<sup>25</sup> A Chronicle of the Carmelites, v. 1, pp. 632-633.

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 641-642։

<sup>27</sup> **Խաչատուր Զուղայեցի**, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 265։ **Մ. Զամչյան**, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 821։ A Chronicle of the Carmelites, p. 642։ **Յովհաննէս Շահխաբունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. Ա, Ս. Էջմիածին, 1842, էջ 227-228։

<sup>28</sup> Ann K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, New York, Toronto, 1953, p. 132։

<sup>29</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 976։

է<sup>30</sup>: Այդ հրովարտականերից առաջինը, որ կարգադրում է շահահանգստացնել Օսմանյան Թուրքիայից կաթողիկոսի ջանքերով երեւանի նահանգ գաղթեցված հայերին, վկայում է Մայր Աթոռի կալվածքները, ինչպես նաեւ իր՝ կաթողիկոսի ծննդավայր Զահուկը շենացնելու ուղղութեամբ Ղազար կաթողիկոսի ձեռնարկած գործնական քայլերի մասին. «Մշտապես շահանշահի արդարութիւնն ու կարգուկանոնը գովաբանելով [մարդիկ] եմ ուղարկում Օսմանցիների եւ Քուրդիստանի վիլայեթը, հուսագրելով ու հորդորելով գաղթեցնում, բերում եմ երեւանի Վաղարշապատ, Օշական, Ֆրանգանոց, Մաստարա եւ Նախիջեւանի Զահրիկ գյուղերում բնակեցնում, որպեսզի այդ մահալները<sup>31</sup>, որ քիչ են բնակեցված, շենանան»: Նույն թվականին հրապարակված մեկ այլ հրովարտակով կաթողիկոսը ջանում է ապահովագրել այդ գյուղերը անօրինական հարկապահանջութիւններից<sup>32</sup>:

Ըստ Իբրահիմ շահից 1748 թ. Ղազար կաթողիկոսի ձեռք բերած հրովարտակի Մայր Աթոռին էին պատկանում Վաղարշապատը, Օշականը, Ֆրանկանոցն ու Մաստարան<sup>33</sup>: Պահպանվել է նաեւ Իբրահիմ շահի նույն թվականի հրամանագիրը որով հաստատվում է Էջմիածնի վանքի ու նրա կալվածքների մուաֆուքիան իրավունքը<sup>34</sup>:

Ընդհանրապես, ինչպես երեւում է Ղազար կաթողիկոսի կողմից ձեռք բերված հրովարտակների ուղղվածութիւններից, վերջինս մեծ ուշադրութիւն է դարձրել հայ ժողովրդի իրավունքների պաշտպանութեանը մահմեդական բնակչութեան ու պաշտոնյաների բռնութիւններից եւ անօրինական միջամտութիւններից: Մասնավորապէս նադիր շահին 1741 թ. ներկայացրած իր խնդրագրում նշում է հետեւյալը. «Հայ կանանց իր հոժար կամքով կամ բռնի կնութեան առնելով մահմեդական են դարձնում: Մահմեդականացնում են նաեւ նրա նախկին [ամուսնուց ունեցած] երեխաներին: Բացի այդ, որոշ մարդիկ որտեղ, որ հանդիպում են գեղեցկադեմ ու հաճելի աղջկա կամ տղայի, բռնի մահմեդականացնում են»: Այս խնդրագրի հիման վրա 1741 թ. հրապարակված նադիր շահի հրամանագրով արգելվում է հայերին բռնի մահմեդականացնելը<sup>35</sup>: Մեծ կարեւորութիւն տալով հիշյալ խնդրի կարգավորմանը՝ նույն բովանդակութեամբ հրովարտակ է ձեռք բերում նաեւ 1748 թ. Իբրահիմ շահից<sup>36</sup>:

<sup>30</sup> Նույն տեղում, վավերագրեր 376, 379:

<sup>31</sup> Մահալ - շրջան, գավառ, XVII-XIX դարերում Անդրկովկասի վարչական բաժանման միավորներից է:

<sup>32</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ 1գ. վավ. 379:

<sup>33</sup> Նույն տեղում, վավ. 398ա:

<sup>34</sup> Նույն տեղում, վավ. 401:

<sup>35</sup> Նույն տեղում, վավ. 370:

<sup>36</sup> Նույն տեղում, վավ. 399:

1741 թվականի նադիր շահի մեկ այլ հրովարտակ արգելում է պետական պաշտոնյաների ու մահմեդական հոգեւորականների միջամտութիւնը հայերի հավատին վերաբերող խնդիրներին եւ նրանց կրօնական օրենքների խախտումը<sup>37</sup>: Մահմեդական հոգեւորականների անհարկի միջամտութիւնը հայ ժողովորդի կյանքին արգելելու նպատակով հրովարտակ է ձեռք բերվում նաեւ Իբրահիմ շահից 1748 թվականին<sup>38</sup>:

Ղազար կաթողիկոսի կողմից են ձեռք բերվել առաջին հրովարտակները Վաղարշապատում ճանապարհների վերահսկողութիւնն իրականացնող ու մաքսային հարկեր գանձող ծառայութիւնների (ուահար) պահակակետի գոյութիւնն արգելող երկու հրովարտակները 1741<sup>39</sup> եւ 1743<sup>40</sup> թվականներին: Ինչպես նշվում է առաջին հրովարտակին կցված խնդրագրում՝ «Հին ժամանակներում Ուշքիլիսա գյուղում ուահար չի նստել, նրանք այլ վայրերում են նստել: Այժմ ուահարը գալիս, հիշյալ գյուղում է նստում, Ուշքիլիսա գնացող եկողին եւ գյուղի մյուս ուայաթներին նեղում է»: Հաջորդ հրովարտակում էլ ավելի խտացնելով գույները՝ կաթողիկոսը նշում է, որ ուահարները, «գիշերցերեկ հարբեցողութեամբ են զբաղվում, գնում են ուայաթների տները, զանազան անկարգութիւններ են անում անհանգստացնելով խեղճերիս տնեցիներին»: Եվ այնուամենայնիւ, ինչպես երեւում է հետագա շրջանի XIX դարի սկզբի հրովարտակների<sup>41</sup> ու այլ փաստաթղթերի<sup>42</sup> բովանդակութիւնից, չի հաջողվում մեկընմիշտ վերջ տալ այդ պահակակետի գոյութեանը:

1747 թ. հունիսի 24-ին նադիր շահը սպանվում է իր դեմ կազմակերպված դավադրութեան հետեւանքով: Նույն թվականի հուլիսի 6-ին Մեշհեդում շահ է հռչակվում նրա եղբորորդի Ալի Դուլին, որը հայտնի էր նաեւ Ադիլ շահ անվամբ: Նրա անունից հրապարակված որեւէ հրովարտակ Մատենադարանի արխիվներում չի պահպանվել: Սակայն Իրանի այս տիրակալը իր կարճատեւ իշխանութեան ընթացքում որոշ ժամանակով իր տիրապետութիւնն է հաստատել Արեւելյան Հայաստանի շրջանների վրա եւ միջամտել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խնդիրներին, մասնավորապէս նաեւ Ղազար կաթողիկոսի գահընկեցութեանը 1748 թ. գարնանը<sup>43</sup>:

1748 թ. գարնանը (մինչեւ մայիսի 20-ն ընկած ժամանակահատվածում)

<sup>37</sup> Նույն տեղում, վավ. 377:

<sup>38</sup> Նույն տեղում, վավ. 400

<sup>39</sup> Նույն տեղում, վավ. 378ա:

<sup>40</sup> Նույն տեղում, վավ. 378բ:

<sup>41</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 550:

<sup>42</sup> Նույն տեղում, վավ. 577:

<sup>43</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3423-25:



Պետրոս Քյուսթուրը կաթողիկոս է ընտրվում<sup>44</sup>: Նույն թվականի վերջին Ադիլ շահի դեմ ապստամբում է նրա հարազատ եղբայրը՝ Իբրահիմ Միրզան եւ դեկտեմբերի 8-ին իրեն շահ հայտարարում: Ղազար կաթողիկոսի եղբայր Յովսեփ քահանան «պատշաճ ընծաներով ու միջնորդութիւններով յաջողեցաւ Ղազարի ազատութեան եւ կաթողիկոսութեան վերադառնալուն հրովարտակը ստանալ», որից հետո Ղազար կաթողիկոսը վերահաստատվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահին<sup>45</sup>:

Ղազարի կաթողիկոսական իրավունքները վերահաստատող հրամանագիրը, ինչպես նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքներին վերաբերող մյուս հրամանագրերը, որ ձեռք են բերվել 1748 թ. դեկտեմբերին եւ որոնց մասին արդեն խոսեցինք վերը, պահպանվել են Երեւանի Մատենադարանում:

Այսպիսով, ի տարբերություն այլ կաթողիկոսների, որոնց ձեռք բերած հրովարտակաների նպատակը հիմնականում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալվածքների պաշտպանությունն էր ոտնձգություններից, Ղազար կաթողիկոսը, աչքաթող շանելով նաեւ այդ խնդիրները, իր ուշադրությունը կենտրոնացրել էր կաթողիկ միսիոներական քարոզչությունից եւ մահմեդականների բռնություններից ու անօրինական միջամտությունից, ինչպես հայերի մահմեդականացմանը նպաստող Իմամ Զահաբի օրենքից հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության վրա, ինչը, կարծում ենք, հակառակ վաղ շրջանի որոշ պատմաբանների կողմից նրա վերաբերյալ արված բացասական արտահայտություններին, խոսում է նրա գործունեության դրական կողմերի ու հայրենասիրական ջանքերի մասին:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 3426:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 3429-30: